МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ2, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

12 Հունիս, 2024

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 00522502,
հասցե՝ «ՀՀ, Երեբունի, Երկաթուղայինների 4 փ., 2/6»,
էլ. փոստ՝ «HaykLV@yandex.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2023 թվականի դեկտեմբերի 18-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է հակահրդեհային միջոցառումների հետ կապված պարագաների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Էլ Ընդ Էվ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00522502, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 4-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի փետրվարի 12-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/11-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 45 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2024 թվականի մարտի 25-ը մատակարարում իրականացնել, սակայն 3-րդ, 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով մինչ օրս չի իրականացրել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե «**խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը **հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**», ուստի Ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում ներկայացրած ապահովումները վճարելու պարագայում վերոնշյալ ցուցակում չի ընդգրկվի:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով 3-րդ, 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10